Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.081

The Diplomatic Representation of Azerbaijan in the Republic of Armenia as a Hub of Anti-Armenian and Anti-State Activity (1919–1920)

Hrant Virabyan[1]
https://orcid.org/0009-0000-6182-4810
Master's Graduate, Faculty of History and Social Sciences, Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan
hrant-virabyan@bk.ru

Keywords: Armenia, Azerbaijan, representation, Yerevan, subversive-conspiratorial activities, Khan-Tekinski, Hakhverdov, T. Bekzadyan.

The purpose of this article is to demonstrate that from the very day of its establishment in March 1919, the diplomatic representation of Azerbaijan in Armenia served as the center for organizing anti-state movements among the Muslim population of Armenia, which consequently strained interstate relations. The Azerbaijani representation in Yerevan, headed by Khan-Tekinski, Hakhverdov, and other diplomatic personnel, carried out subversive anti-Armenian activities. This is irrefutably evidenced by declassified telegrams exchanged between the Azerbaijani diplomatic representatives in Yerevan (such as Tekinski) and the Azerbaijani government. These communications contained valuable intelligence regarding the number and movements of the Armenian army, as well as the country's economic situation, grain reserves, and food supplies. In essence, this activity was of an espionage and intelligence-gathering nature, aimed at undermining the foundations of Armenian statehood to facilitate the annexation of parts of Armenia's territory to Azerbaijan. The Azerbaijani representation in Yerevan, by carrying out destructive and conspiratorial activities against Armenia, advised its government on the means to weaken Armenia and obstruct the consolidation of its statehood. The Allied British forces were also aware of these activities, which ultimately led to the suspension of the diplomatic mission at that historical and political moment.

Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում որպես հակահայկական ու հակապետական գործունեության կազմակերպման կենտրոն (1919-1920 թթ.)

[1] This research was supported by the Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia (MESCS RA) (Research project № 25RG-6A113 — "Interethnic developments and displacements of ethnic groups of population in the Republic of Armenia (1918–1990s)").
History and Culture Vol.-22(2), 2025, pp. 81-98.
Received: 14.09.2025
Revised: 12.10.2025
Accepted: 24.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2025

The Diplomatic Representation of Azerbaijan in the Republic of Armenia as a Hub of Anti-Armenian and Anti-State Activity (1919–1920)

Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում որպես հակահայկական ու հակապետական գործունեության կազմակերպման կենտրոն (1919-1920 թթ.)

Հրանտ Վիրաբյան

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի մագիստրոս

Հիմնաբառեր՝ Հայաստան, Ադրբեջան, ներկայացուցչություն, Երևան, դավադրության գործողություններ, Խան Թեքինսկի, Հախվերդով, Տ. Բեկզադյան:

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ Ադրբեջանի ներկայացուցչությունը 1919 թ. մարտից՝ իր հաստատման օրից, հանդիսացել է Հայաստանում մահմեդական բնակչության հակապետական շարժումների կազմակերպման կենտրոնատեղի, և այդ առումով երկու պետությունների միջպետական հարաբերությունները կրել են լարված բնույթ: Ադրբեջանի ներկայացուցչությունը Երևանում, ի դեմ Խան Թեքինսկու, Հախվերդովի, ծավալել է հակահայկական գործունեություն, որի մասին անհերքելիորեն փաստում են ՀՀ կառավարության ու հատուկ ծառայությունների կողմից գաղտանազերծված այն հեռագրերը, որոնք փոխանակվել են Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչներ Թեքինսկու ու այլոց կողմից Ադրբեջանի կառավարության հետ, և որոնք պարունակում էին արժեքավոր տեղեկություններ ՀՀ բանակի թվաքանակի ու տեղաշարժերի, պարենային-տնտեսական վիճակի, հացի պաշարների և այլնի մասին: Ըստ էության, այդ գործունեությունը կրել է լրտեսական-դիվերսիոն բնույթ. ուղղված է եղել ՀՀ պետականության հիմքերի խարխլմանը, ՀՀ տարածքների մի մասի անդամահատմանն ու կցմանը Ադրբեջանին: Ադրբեջանի ներկայացուցչությունը, Երևանում ծավալելով քայքայիչ-դավադրական գործունեություն՝ ընդդեմ Հայաստանի, իր կառավարությանը հուշում էր, թե ինչպես ու ինչ միջոցներով թուլացնել Հայաստանը, վնաս հասցնել նրա պետականության ամրապնդմանը, ինչին տեղյակ էին նաև դաշնակից բրիտանացիները, և որի արդյունքում այն կասեցվեց:

Дипломатическое представительство Азербайджана в Республике Армения как центр организации антиармянской и антигосударственной деятельности (1919–1920 гг.)

Грант Вирабян

Магистр кафедры истории Армении факультета истории и обществоведения Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

Ключевые слова: Армения, Азербайджан, представительство, Ереван, подрывная и заговорщическая деятельность, Хан-Текинский, Ахвердов, Т. Бекзадян.

Цель данной статьи — показать, что со дня своего основания в марте 1919 года дипломатическое представительство Азербайджана в Армении являлось центром организации антигосударственных движений мусульманского населения страны, что крайне негативно сказывалось на межгосударственных отношениях двух республик. Азербайджанское представительство в Ереване в лице Хан-Текинского, Ахвердова и других дипломатических лиц вело активную антиармянскую деятельность. Это неопровержимо подтверждают рассекреченные телеграммы, которыми дипломатические представители Азербайджана в Ереване (в частности, Хан-Текинский) обменивались со своим правительством. В этих депешах содержались ценные разведывательные сведения о численности и передвижениях армянской армии, экономическом положении страны и запасах зерна. По сути, эта деятельность носила шпионско-разведывательный характер и была направлена на подрыв основ армянской государственности с целью последующей аннексии части территорий Армении. Азербайджанское представительство в Ереване, осуществляя деструктивную и заговорщическую деятельность против Армении, координировало действия со своим правительством, предлагая конкретные меры по ослаблению республики и препятствуя консолидации её государственности. О заговорщической деятельности представительства было известно и союзному британскому командованию, что в конечном итоге привело к приостановке работы азербайджанской дипломатической миссии в этот исторический и политический период.

* * *

Ներածություն։ Գիտական հետազոտությունը կատարվել է արխիվային փաստաթղթերի, գրականության տվյալների ու այլ վավերագրերի հիման վրա՝ իրագործելով իրադարձությունների պատմաքննություն՝ հենվելով պատմահամադրական, համեմատական մեթոդների վրա։ Պատմաքաղաքական առումով առանձնացված թեմայի դիտարկումը վերաբերում է հայկական պետության կայացման 1918-1920 թթ. փորձի ու դասերի վերհանմանը, ՀՀ անդրանիկ կառավարության քաղաքականությանն ու իրագործած միջոցներին Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության լրտեսական-սադրիչ հակահայկական գործունեության բացահայտմանը, որն ուղղված էր ՀՀ պետականության խարխլմանն ու տարածքային անդամահատմանը, ինչը վերջին հաշվով միտված էր էթնոքաղաքական հակամարտության խորացմանը Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում, ինչպես և արդի պատմափուլում։ Այս շարքում կարևոր տեղ են զբաղեցնում հայ պատմաբաններ Յու. Ղուլյանի մենագրությունն ու մի շարք արժեքավոր գիտական հոդվածներ [Ղուլյան, 2009; Ղուլյան, 2001, 124-129; Ղուլյան, 2006, 137-145; Ղուլյան, 2007, 142–148], Վ. Վիրաբյանի ուսումնասիրությունները [Virabyan, 2021, 51-81; Virabyan, 2023, 135-157], Ադրբեջանում 1919 թ. մարտի 11-ից մինչև 1919 թ. օգոստոսի 27-ը ՀՀ դեսպան Տիգրան Բեկզադյանի օրագիր-հուշագրությունը [Տիգրան Բեկզադյան, 2025], օտարազգի հեղինակներ Վ. Բլիշրենկոյի ու Ռ. Սարիևի, Ն. Ջամալովայի, Ս. Գանբարովայի [Блищенко В., Сарыев Р. 2015, 105-113.Jamalova, 2025, 887-90; Ганбарова, 2021, с. 66-74] և այլոց հրապարակումներ, փաստաթղթերի ժողովածուներ [Գաղտնի փաստաթղթեր 1920; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000; Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. 1993, 22-391], որոնցում հարցը պատմաքննվել է հայեցակարգային տարբեր՝ իրարամերժ դիքերից՝ ներկայացնելով Խան Թեքինսկու գործունեության տարբեր կողմեր։

The Diplomatic Representation of Azerbaijan in the Republic of Armenia as a Hub of Anti-Armenian and Anti-State Activity (1919–1920)

Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում որպես հակահայկական ու հակապետական գործունեության կազմակերպման կենտրոն (1919-1920 թթ.)

1918-1920 թթ Հայաստանի Հանրապետությունը. բախվեց երկրի անկախությունն ամրապնդելու ու հայրենի տարածքները վերադարձնելու դժվարին խնդիրների հետ: ՀՀ կառավարությունը հաշվի առավ, որ ստիպված կլինի բախվել ինչպես Ադրբեջանի, այնպես էլ հանրապետության մահմեդական շրջանների բնակչության դիմադրությանը: ՀՀ տարածում ապրող մահմեդականների անիշխանական վարքագծին վերջ տալու համար ՀՀ-ն չուներ բավարար միջոցներ, թեև գործնական քայլեր ձեռնարկվեցին մահմեդական խռովարար գյուղերը ենթարկեցնելու ՀՀ օրինական իշխանություններին, կանխելու ՀՀ դեմ սաղրիչ–լրտեսական գործողությունները: Եվ չնայած Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների միջև դիվանագիտական-քաղաքական հարաբերություններ հաստատվեցին 1919 թ. մարտին [Ղուլյան, 2001, 124-129], այն առաջ բերեց բազմաթիվ խնդիրներ, Ադրբեջանի ներկայացուցչությունը Երևանում դարձավ Հայաստանում մահմեդական բնակչության հակապետական ելույթների կազմակերպման ակտիվ կենտրոնատեղի:

Վ. Բլիշչենկոն ու Ռ. Սարիևը նշում են, որ դեռևս 1918 թ. սեպտեմբերի 12-ին՝ մինչև Բաքու մտնելը, ԱԴՀ կառավարությունը որոշում կայացրեց հավատարմատարներ նշանակել Գերմանիայում, Իրանում, Հայաստանում ու ԱԴՀ շահերը Ուկրանիայում, և մինչ 1918 թ. հոկտեմբերի 23-ը լիազորեց Հայաստանում ներկայացնել Թեյմուր բեկ Մակինսկուն, որն իր պարտականություններին էր անցնում հոկտեմբերի 20-ից [«Азербайджан», 1918, 22 октября, Баку; Нифталиев, 2024, 34], և այդպես, ըստ վերոնշյալ հեղինակների, Ադրբեջանում էլ 1918 թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ կառավարության կողմից Ադրբեջանում որպես դիվանագիտական ներկայացուցիչ առաջադրվեց Տ. Բեկզադյանը [Блищенко, 2015, 108], ինչը չէր համապատասխանում իրողություններին, քանզի Տ. Բեկզադյանը դեսպանի պարտականություններին էր անցել 1919 թ. մարտի 11-ին, իսկ մինչ այդ ընթացել էր դիվանագիտական քաշքշուք երկու կողմերից առաջադրվող թեկնածուների շուրջ [Տիգրան Բեկզադյան, 2025, 5-17, 42-43]: Բացի դրանից՝ Մ. Թ. Մակինսկուն պատգամավոր ընտրելու պատճառով ԱԴՀ կառավարության որոշմամբ նրան այդ ընթացքում փոխարինեց Մահմեդ Խան Թեքինսկին:

1918 թ. դեկտեմբերի 4-ին Վրաստանում Ադրբեջանի ներկայացուցչին փոխարինող Վեքիլովը ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի միջոցով հարցապնդում արեց Հայաստանում Խան Թեքինսկու թեկնածության առաջադրման վերաբերյալ ՀՀ կառավարության կարծիքն իմանալու համար [ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 25, 37], չնայած սկզբնապես խոսք է գնացած ինում երեք թեկնածուների մասին: Այնպես ստացվեց, որ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը դեռ նոյեմբերի 8-ին Խան Թեքինսկուն անցանկալի էր գտել, և ՀՀ կառավարությանը խորհուրդ էր տվել ձգձգել հարցը՝ ի պատասխան այն բացասական վերաբերմունքի, որ Ադրբեջանը ցուցաբերել էր Տիգրան Բեկզադյանի թեկնածության դեմ կապված Ադրբեջանում նրա նշանակման հետ ԱԴՀ կառավարության կողմից համաձայնություն տալու հետ [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 33; ֆ. 200, ց. 2, գ. 25, թ. 1-2; գ. 18, թ. 5]: ՀՀ կառավարությունը այդ փուլում մերժեց Ադրբեջանի առաջադրած երեք թեկնածուներին, այդ թվում՝ նաև Խան Թեքինսկու թեկնածությունը: Ի վերջո, 1918 թ. վերջին-1919

թ. սկզբին այնպիսի իրավիճակ ստեղծվեց, որ այլևս երկու հակամարտող կողմերի համար անիմաստ դարձավ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ձգձգումը, որի հարցը լսվեց ՀՀ կառավարության հունվարի 8-ի նիստում, իսկ արդեն հունվարի 18-ին կառավարությունը հանձնարարականներ տվեց ԱԳ նախարարին Ադրբեջանի հետ հարաբերության մեջ մտնել՝ դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակելու մասին [ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 5, 14]։ Ադրբեջանը նույնկերպ վարվեց՝ 1919 թ. հունվարին երկու անգամ անդրադառնալով խնդրին. հունվարի 28-ի նիստում Ադրբեջանի պառլամենտը կարևորելով Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը՝ այն շաղկապեց Հայաստանում ապրող մահմեդականների հետ կապի ստեղծման անհրաժեշտությամբ [«Զանգ», 1919, 10 հունվարի, Երևան; ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 1; «Закавказское слово», 1919, 6 февраля, Тифлис]։ Տեղի ունեցավ փոխզիջում,.Բաքվում կրկին դեսպան առաջադրվեց Ադրբեջանի կողմից մինչ այդ մերժված Տիգրան Բեկզադյանը, իսկ Հայաստանի կառավարությունը, որը Թեքինսկուն համարում էր անցանկալի, ընդունեց նրա թեկնածությունը և իր կողմից առաջադրեց Տ. Բեկզադյանին։ Արդեն 1919 թ. հունվարի 10-ին Ադրբեջանի արտգործնարարին տեղեկացվեց ՀՀ համաձայնության մասին, որ Խան Թեքինսկու թեկնածությունը ընդունվում է [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 39, 49]։

Այսպես, դիվանագիտական քաշքշուքներից հետո՝ 1919 թ. փետրվարի 2-ին, Ադրբեջանի կառավարությունը ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Մամեդ Խան Թեքինսկուն, որի մասին ՀՀ-ում իրազեկ դարձան Թիֆլիսում Ադրբեջանի պառլամենտի պատգամավոր Ա. Դաստակովի կողմից ուղարկված հեռագրից։ Ըստ այդմ ելնելով հարցի արագ լուծման անհրաժեշտությունից, արագացվեց նաև Տ. Բեկզադյանի մեկնումը Բաքու, որը մարտի 11-ին հասավ Բաքու, նրան դիմավորեցին միայն Բաքվի Հայոց ազգային խորհրդի անդամները, Բեկզադյանին Ադրբեջանի կառավարության կողմից դիմավորողներ չեղան [Տիգրան Բեկզադյան, 2025. 5-11; ՀԱԱ, 200, ց. 1, գ. 192, թ. 29; «Զանգ», 1919, 21 մարտի, Երևան], իսկ Խան Թեքինսկին Երևան ժամանեց 1919 թ. մարտի 14-ին [«Զանգ», 1919, 14 մարտի; Վրացյան, 1993, 309]։

Իր ժամանման օրից սկսած՝ շուրջ մեկ տարի, Ադրբեջանի ներկայացուցիչը Երևանում՝ Մամեդ Խան Թեքինսկին իր գործակալների, ներկայացուցչությանը առընթեր ռազմական կցորդի, այդ թվում՝ Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությանն առընթեր զինվորական կցորդ Մահմեդ բեկ Ալիևի միջոցով և տարբեր նամակատարների այլ միջոցներով ծածկագրված հաղորդագրությունների միջոցով իր պարտականությունն է համարել իր կառավարությանը անդադար իրազեկել ՀՀ տարբեր շրջաններում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի մասին՝ աշխատելով արգելել Հայաստանին միացնելու Շարուր-Նախիջևանը և այլ շրջաններ՝ սեփական կառավարությունից անընդհատ պահանջելով խոշոր գումարներ, միաժամանակ պահանջելով ուժ գործադրել ՀՀ կառավարության վրա՝ այդ նպատակներին հասնելու համար [Jamalova, 2025, 888-885; Հովհաննիսյան, 2005, հ. I, 263-264; Virabyan, 2021, 51-81; Virabyan, 2023, 135-157], նաև լրտեսելով ամեն ինչի՝ զինվորական ուժերի քանակի ու տեղաշարժերի, մահմեդական բնակչության մոտ առկա գումարների ու դրանց համալրման և այլնի մասին [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1-ին, թ. 1-2] ու մի նպատակ հետապնդելով՝ ինչպես հնարավորինս վնասել Հայաստանին ու ներքին խռովություններ կազմակերպել՝ իշխանության տապալման ու ապստամբած տարածքները Ադրբեջանին բռնակցելու համար [Տերտերյան, 1957, 364, 1923, 10], չնայած իր ժամանման պահին հավաստացումներ էին տրվել երկու կողմերի միջև բարիդրացիական

հարաբերությունների հաստատմանը նպաստելու մասին: Նրա գլխավորած ներկայացուցչությունը Երևանում 1919 թ. մարտից մինչև 1919 թ. կեսերը ամբողջովին զբաղված էր նրանով, թե ինչ ձևերով ու միջոցներով վնաս տա Հայաստանի Հանրապետությանը՝ սկսած հայաստանաբնակ մահմեդական զանգվածին գրգռելով ապստամբության օրինական հայկական իշխանությունների դեմ մինչև ռազմական աջակցության ցուցաբերումը, ապակայունացնելով իրավիճակը հանրապետությունում, խոչընդոտելով երկրի բնականոն զարգացումը, որի ցայտուն արտացոլանքն են նրա 75-ից ավել Երևանից Բաքու ուղարկած հեռագրերն ու հաղորդագրությունները, որոնք գաղտնազերծվեցին ՀՀ հետախուզական ծառայության կողմից [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 71, թ. 309-322; Վրացյան, 1993, 310-316; Ռուբէն, 1991, 193-204] և Արտգործնախարարության կողմից հրատարակվեցին Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո առանձին գրքույկով [Գաղտնի փաստաթղթեր, 1920]:

Ըստ հենց ադրբեջանական հեղինակների դիտարկման՝ Թեքինսկին 1919 թ. հունիսի 10-ին, երբ աշխատում էր որպես Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Հայաստանում, հատուկ ուղերձ է ստացել Ադրբեջանի Հանրապետության արտգործնախարարությունից. նրան հանձնարարվում էր «հավաքել վիճակագրական տվյալներ և՛ Երևանի նահանգի և՛, եթե հնարավոր է, Կարսի նահանգի թալանված մուսուլմանաբնակ գյուղերի ներկայացուցիչների օգնությամբ՝ մուսուլմանների կրած կորուստների վերաբերյալ՝ թե՛ մարդկային զոհերի, թե՛ գույքի առումով՝ նշելով տուժածների, սպանվածների ու վիրավորների անունները, ազգանուններն ու բնակության վայրը, նրանց տարիքը, գերիների, ազատ արձակված կամ դեռևս գերության մեջ գտնվող տղամարդկանց ու կանանց, ինչպես նաև ավերված գյուղերի ու այգիների, գողացված անասունների և այլնի մասին»: Ըստ այդ աղբյուրների՝ պաշտոնավարման ընթացքում Թեքինսկին դեմ էր Հայաստանի հետ տնտեսական կապերի հաստատմանն ու նավթ մատակարարելուն, մինչև ադրբեջանցի փախստականները լիովին չվերադառնային իրենց տները՝ հետևողականորեն վարելով ընդգծված քաղաքականություն՝ ուղղված իր կողմից ադրբեջանական տարածքներ համարվող Նախիջևանի, Շարուրի, Դարալագյազի ու Օրդուբադի նահանգների, Վեդիբասարի, Զանգիբասարի և այլ վայրերի մուսուլման բնակչությանը զինելուն, որոնք բրիտանական հրամանատարության որոշմամբ անցել էին հայկական վերահսկողության տակ: Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ երկարաժամկետ հեռանկարում Հայաստանը կորցրեց այդ տարածքների նկատմամբ վերահսկողությունը, ինչին զգալիորեն նպաստեցին հենց Թեքինսկու դիվանագիտական ջանքերը, ինչը, սակայն, Հայաստանը կանխեց՝ վերծանելով Մ. Թեքինսկու հեռագրերը, քանի որ վերջինս կոպիտ սխալ էր թույլ տվել [Mammadyarov, 2019. 104-105]:

Թեքինսկու մասին հստակ է արտահայտվել նրա օրոք Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական հավատարմագրված ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը 1919 թ. օգոստոսի 19-ի իր օրագրային գրառման մեջ՝ նշելով, որ «Թեքինսկին Հայկական կառավարության նկատմամբ վարել է հակապետական քաղաքականություն, [հակապետական] քարոզչություն է տարել բնակչության միջավայրում»՝ ասելով, որ ինքն ունի դրանք հաստատող համապատասխան փաստաթղթեր [Տիգրան Բեկզադյան, 2025, 153]: Բեկզադյանը, 1919 թ. իր օրագրային գրառման մեջ միաժամանակ

իր սկզբունքային անհամաձայնությունը արտահայտելով Թեքինսկու բռնած նման դիրքորոշմանը, ընդգծում էր, որ նշանակվելով Բաքվում ՀՀ ներկայացուցիչ՝ ինքն իր «կառավարությունից ունի կատեգորիկ ցուցում՝ գործածել կարողությունների ամբողջ ուժը երկու երիտասարդ հանրապետությունների միջև սերտ ու բարեկամական կապեր հաստատելու ուղղությամբ, նաև չթաքցնելով այդ խնդրի ամբողջ դժվարությունը այն ատելության, թշնամանքի ու անբարյացակամության մթնոլորտում, որոնցով պատված են երկու տարաբախտ ժողովուրդները,…որ չկա այլ ճանապարհ մշակութային զարգացման, պետական շինարարության և բարգավաճման համար» [Տիգրան Բեկզադյան, 2025, 47]:

Հետևաբար միանգամայն օրինաչափ է, որ հնարավորիս վերահսկվում էր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը, որը դարձավ հակահայկական գործողությունների մշակման ու Հայաստանում մահմեդականների համախմբման ու ուղղորդման կենտրոնատեղի, որտեղից կարևոր տեղեկություններ էին հաղորդվում ՀՀ զորքերի զորաշարժերի մասին, քաղաքական դիտարկումներ էին կատարվում, հրահանգներ ու խորհրդատվություն տալիս սեփական կառավարությանը՝ աջակցելու Հայաստանում բնակվող մահմեդական հոծ բնակչությանը: Այդ առումով Թեքինսկու կողմից Բաքու ուղարկված մի շարք ծածկագրված հեռագրերի գաղտնազերծումը հնարավորություն տվեց բացահայտելու ու կանխելու թշնամական որոշ քայլեր, որոնք վերաբերում էին մահմեդական հակապետական խռովարար ու ապստամբ տարրերին դրամական-ֆինանսական ու ռազմական աջակցություն ցուցաբերելուն: Այդ մասին է Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու Բաքու ուղարկված 1919 թ. մարտի 22-ին առաջին գաղտնի ծածկագիր-հեռագրերից մեկը. «Մարտի 14-ին Հայաստանը Թիֆլիսից ստացաւ 14 միլիոն բօն, բայց եթէ ֆինանսական տեսակէտից դժուարութիւններ յարուցանեք, շուտով ծանր դրութեան մէջ կընկնի: Եկամուտների բացակայութեան պատճառով Հայաստանը չի կարող ինքնուրոյն կեանք վարել» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 18]:

Ադրբեջանի կառավարության նախագահի ու արտաքին գործերի նախարարի հատուկ ուշադրությունը հրավիրելով Նախիջևանի շրջանի իրադարձություններին՝ Խան Թեքինսկին [Ղուլյան, 2006, 137-145] ապրիլի 18-ին միաժամանակ տեղեկացնում էր Սոթք-Զոռի շրջանում հայկական զորամասերին մահմեդականների ցուցաբերած դիմադրության ու սկսած մարտերի մասին [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 4]: Ապրիլի 29-ին Խան Թեքինսկին կառավարությունից ցանկանում էր պարզել, թե ինչպիսի օգնություն կարող են ցույց տալ Նախիջևանի մահմեդականներին՝ հայկական զորքերի ժամանման հետ կապված. «Կուղարկի՞ արդյոք զորք, թեկուզ կամավորների անվան տակ» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 4]: Թեքինսկին դարձավ Ադրբեջանի ու Շարուր-Նախիջևանի միջև կապող օղակը և Շարուր-Նախիջևանում Ադրբեջանի քաղաքականության իրականացնողը, որի միջոցով ֆինանսական օգնություն էր ցուցաբերվում Շարուր-Նախիջևանի ապստամբ մահմեդականներին (Կնյազյան, 2008, 96):

Ադրբեջանի ներկայացուցիչների հակահայկական դավերի ու սադրանքների ակտիվ մասնակիցն է եղել դիվանագիտական քողածածածկույթի տակ թաքնված Թեյմուր Խան Մակինսկին, որը դեռ 1918 թ. հոկտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի վերջը ներկայացրեց Ադրբեջանի Հանրապետությանը Երևանում: Վերջինս նաև Երևանի նահանգի մուսուլմանական հայրենակցական միության վարչության նախագահն էր [Ганбарова, 2021, 70]: Ս. Վրացյանը, անդրադառնալով Մակինսկուն, փաստում է հետևյալը. «Ապրիլի 30-ին հետները մեծ գումարներով

Երևան են հասնում Ազրբեջանի գործակալներ Նախիջևանսկին ու Մակինսկին՝ Նախիջևան հասնելու համար… սկսվեց ազրբեջանյան գործակալների դավերի մի նոր շրջան» [Վրացյան, 1993, 311, 312]: Այդ մասին է վկայում Թեքինսկու՝ Ադրբեջանի նախարարապետին ուղղված 1919 թ. մայիսի 1-ի հեռագիրը. «Ապրիլի 30-ին ժամանեցին Մակինսկին (Գանիզադե) ու Նախիջևանսկին: Տոմսոնը Երևանում արգելեց Մակինսկուն անցնել Նախիջևան այն պատճառաբանութեամբ, թէ այդ շրջանը գտնուում է Հայաստանի կառավարութեան վարչութեան ներքոյ: Մակինսկին դրամները յանձնեց ինձ. սպասում եմ ցուցմունքների, թէ ինչպես գործադրեմ Նախիջևանին յատկացած գումարները»:

Թեքինսկու գլխավոր նպատակներից մեկը հենց Շարուր-Նախիջևանն էր, որում ապստամբական ուժերի համակարգված դավադրության կազմակերպումը Թեքինսկին իր խնդիրն էր համարում՝ Մակինսկու ու այլոց միջոցով մեծ գումարներ փոխադրելով շրջան, և այս նպատակի իրագործման համար հարմար եղավ Մակինսկի-Գանիզադեն, որին գեներալ Թոմսոնը արգելեց անցնել ՀՀ կառավարության իրավասությանը հանձնված Նախիջևանի շրջան, որից դժգոհ Թեքինսկին մայիսի 1-ին հեռագրեց Ադրբեջանի վարչապետին, թե չգիտի ինչպես գործադրել Նախիջևանի հատկացված գումարները [Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ. 1993, 139; Գաղտնի փաստաթղթերը, 1920, 21]:

Թեքինսկին շատ գործունյա ձևով էր գործում,՝1919 թ. մայիսի 4-ին կառավարությանը խնդրելով շտապ պատասխանել ապրիլի 29-ի իր հեռագրին. «Ինձ նախիջևանցիները հարցնում են. ինչպե՞ս վարվել. կգա՞ արդյոք նրանց օգնության Ադրբեջանը, եթե նախիջևանցիները հայերին ցույց տան դիմադրություն» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 5]: Նույն օրվա մեկ այլ հեռագրում Խան Թեքինսկին հայտնում էր Ադրբեջանի կառավարությանը. «Դեպի Նախիջևան շարժվեցին հայկական գնդերը. որպեսզի գործադրվի ճնշում Հայաստանի վրա, անհրաժեշտ եմ համարում մեր գնդերը անհապաղ կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա: Նախիջևանի շրջանի բնակչությունը պատրաստ է ցույց տալ դիմադրություն: Շարունակվում է հայկական զորքերի կուտակումը Դավալուում, Սադարակ գյուղի մոտ՝ Գայլի Դուռքի շրջանում» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 5]:

Խան Թեքինսկին պահանջում էր իրեն տրամադրել մեծ քանակության դրամ. «Իմ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Շարուրը, Նախիջևանը, Օրդուբադը միավորվել են՝ ի դեմս Նախիջևանի (մուսուլմանական) Ազգային խորհրդի, որը ինձ հետ մշտապես պահպանում է կապ» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 8-9]: ԱԴՀ արտգործնախարար Ջաֆարովը անմիջապես արձագանքում է Թեքինսկու այդ հեռագրին. «Հավանություն եմ տալիս Շարուր-Նախիջևանի հետ կապի ստեղծման միջոցառումներին. համաձայն եմ բաց թողնել ֆինանսական միջոցներ՝ զինվորական կազմակերպությունների համար: Հայտնեցեք նշված պլանի իրականացման ու կազմակերպման ձևերը» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 9]: Ադրբեջանի ԱԳ նախարարի պաշտոնակատար Զիաթխանովը, ցանկանալով հանգստացնել Թեքինսկուն՝ ի պատասխան դեռևս ապրիլի 29-ին արտահայտած հարցապնդման, թե արդյո՞ք կօգնի իրենց կառավարությունը, եթե Նախիջևանը դիմադրի հայկական զորամասերին, պատասխանել է Թեքինսկուն, թե տվյալ պահին դեռ այդ մասին խոսք չի կարող լինել՝ հանձնարարելով եռանդուն բողոքել Նախիջևանը գրավելու նպատակով հայկական կառավարության ձեռնարկած բոլոր տեսակի գործողությունների և «Ադրբեջանի ինքնիշխան

իրավունքների նսեմացման դեմ» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 22; ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1-ին, թ. 32]:

Կապված գեներալներ Ջ. Միլնի ու Ու. Թոմսոնի Թիֆլիս ժամանման հետ՝ Թեքինսկին վարչապետից մայիսի 1-ի հեռագրում խնդրում էր շտապ բանակցել նրանց հետ Նախիջևանի շուրջ, իսկ մայիսի 5-ին իր կառավարությանը խորհուրդ էր տալիս անհապաղ ադրբեջանական զորքը կենտրոնացնել հայկական սահմանների երկայնքով, ճնշում գործադրել, որ Նախիջևանի բնակչություն պատրաստ է դիմադրել [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1-ին, թ. 21-22]: Մայիսի 9-ին Թեքինսկին, հայտնելով Նախիջևանում հայկական վարչության նշանակման մասին և տեղի թրքության կողմից այն չընդունելու մասին, կրկին հայտնում էր, որ ձեռնարկված միջոցների շնորհիվ հայերի ավանտյուրան հաջողություն չի ունեցել, Ադրբեջանի կառավարությանը կոչ էր անում դիվանագիտական ակտիվ աշխատանքներ ծավալել Թիֆլիսում դաշնակից հրամանատարության շրջանում և համաձայնության գալ իրենց խնդիրների շուրջ, հակառակ դեպքում տանուլ կտան [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 25]:

Խան Թեքինսկին, օգտվելով դիվանագիտական անձեռնմխելիության քողածածկույթից, ողջ ժամանակ զբաղվում էր բացահայտ լրտեսությամբ ու խռովարար մահմեդական զանգվածին կազմակերպելով: Այդ նպատակի իրագործման համար Խան Թեքինսկին վարչապետին ուղղված 1919 թ. մայիսի 10-ի գաղտնի հեռագրում գրում է. «Բոլշևիկների կողմից Բաքվին վտանգ սպառնալը պատճառ բերեցեք և խնդրեցեք անգլիացիներին, որ Կարսի թնդանոթները փոխադրեն Բաքու» [Հարությունյան, 2002, 61-62], որը հետագայում ընկնում է Ադրբեջանի ձեռքը, որի մասին փաստում է Ա. Խատիսյանի 1920 թ. ապրիլի 14-ի նամակը՝ ուղղված Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության զինվորական ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկևիչին [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 22-23]:

Անդադար զբաղվելով Հայաստանի մահմեդականներին համախմբելու սադրիչ գործունեությամբ՝ Խան Թեքինսկին, ի պատասխան ԱԴՀ արտգործնախարարի 1919 թ. հունիսի 5-ի հեռագրի, հունիսի 11-ին տեղեկացնում էր, որ Շարուր-Նախիջևանի շրջանի մահմեդականներն ունեն կիսականոնավոր զորք՝ մինչև 6000 զինվոր, հեծելազորով, թնդանոթով, գնդացիրներով, «մարտական հատկանիշներով նրանք հայերին չեն զիջում», պատերազմական գործողությունների ժամանակ կարող են հասցնել մինչև 10.000-ի: «Կարծում եմ,– հայտնում էր Խան Թեքինսկին,– մենք պետք է ծախսեր անենք 6000 զինվորի համար հին հրամանատարական կազմով, զորքը տեղաբաշխել այն տեղերում, որտեղ գտնվել են մինչև հայերի գալը, մեկ զորամաս կենտրոնացնել Զանգեզուրի լեռներում: Դրամի ճիշտ ծախսումը լրիվ երաշխավորել դժվար է, գործի կարևորությունը ստիպում է հաշտվել նույնիսկ ոչ մեծ չարաշահումների հետ» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 9; ֆ. 206, ց. 1, գ. 84, թ. 27; Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ. 2000, 110]:

1919 թ. հունիսի 11-ի Թեքինսկու հեռագրում ԱԳ նախարարին ևս հայկական իշխանությունների դեմ Նախիջևանում ապստամբության կազմակերպման խնդիրներ ու խորհուրդներ կան, առաջարկ՝ սուրհանդակ ուղարկելու Նախիջևան [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 28], սակայն այդ փուլում Ադրբեջանի նկրտումները ձախողվում են՝ հայկական զորքերի կողմից Նախիջևանի, Շարուրի, Վեդիբասարի ու Շահթախթի գրավմամբ, որտեղ հայկական վարչություն է հաստատվում, որի պատճառը Թեքինսկին համարեց ժամանակին նյութական օժանդակության ուշացումը, և հունիսի 22-ին կառավարությանն առաջարկեց Շարուր-

Նախիջևանի զինվորական կազմակերպությունների համար նոր հրահանգ իջեցնել, շարունակել ծախսերը [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 25, 31]՝ կարծելով, որ միայն այդ գումարներն ավելացնելով կարելի է Հայաստանի թաթարաբնակ շրջաններում հակահայկական հակապետական շարժումներ կազմակերպել [Տերտերյան, 1957, 366]։ Ներկայացուցչությունը ՀՀ դեմ ձեռնարկվող սադրիչ գործողությունների բոլոր հրահանգները ստանում էր անմիջապես ԱԴՀ կառավարությունից, որի կարգադրությամբ ապստամբ մահմեդաբնակ գյուղերն էին ուղարկվում գաղտնի գործակալներ [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1-ին, թ. 5-6]։ Թեքինսկին իր առաջնահերթ խնդիրներից էր համարում դաշնակիցների, մասնավորապես անգլիացիների վրա ազդեցություն գործելը՝ փորձելով նրանց ետ վանել Հայաստանի նկատմամբ որևիցե տրամադրվածության դրսևորումից, որի մասին ուշագրավ դիտարկում կա վերջինիս՝ ԱԳ նախարարին հասցեագրված 1919 թ. ապրիլի 16-ի հեռագրում. «Անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների ու Կովկասի ողջ մահմեդականների, նույնպես և Հաշտության վեհաժողովի առաջ անգլիացիների այն ցանկության դեմ, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թվով կես միլիոն հայերին» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 19]։

Ռ. Տեր-Մինասյանը, 1919 թ. անդրադառնալով Ադրբեջանի այս տեսակի քայքայիչ գործունեությանը Հայաստանում, արտահայտում էր ՀՀ կառավարության դիրքորոշումը. «Չդիպչելով Ադրբեջանի գործակալներին՝ իսլամ գավառներում՝ Զանգիբասար, Վեդի, Բասարգեչար, Զոդ, Շարուր և Նախիջևան և այլն, նրա նախաձեռնությունը չհրահրել» [Ռուբէն, 1982, 246], ինչը բացատրվում էր անհրաժեշտ միջոցների բացակայությամբ։

Գործնականում Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը, հրահանգ ունենալով պաշտպանելու հայաստանաբնակ մահմեդականների իրավունքները, իրականացնում էր նաև Երևանի և այլ տեղ գործող մուսուլմանական Ազգային խորհուրդների հետ թե՛ կապը և թե՛ նրանց գործունեության ուղղորդումը, ԱԴՀ կառավարության միջոցով մահմեդականներին հասցեագրված միջոցների բաշխումը։ Ի պատասխան Ադրբեջանի կառավարության պահանջին՝ շտապ հայտնել Նախիջևանի, Շարուրի, Վեդիբասարի, Գողթնի, Օրդուբադի, Ջուլֆայի վիճակի մասին, հունիսի 26-ին Խան Թեքինսկին զեկուցում էր. «Նախիջևանի, Շարուրի, Վեդիբասարի, Շահթախթի շրջանները գրավված են հայկական զորքերի կողմից, հաստատված է հայկական վարչություն։ Ջուլֆան հայերի ձեռքին է, մուսուլմանական զորքերը ցրված են։ Կա ընդամենը 300 չեթնիկ» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 10; ֆ. 206, ց.1, գ. 84, թ. 28; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., 2000, 114]։

1919 թ. հունիսի 22-ին «բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար» Ադրբեջանի՝ ՀՀ գտնվող դիվանագիտական հավատարմատարը, խիստ թշնամաբար տրամադրված, գրել է. «Ադրբեջանը, բացի Հայաստանից, կարծում եմ, այժմ չունի այլ թշնամի. Հայաստանի վրա պետք է դարձնել հատուկ ուշադրություն. քուրդ Սմկոյին հարկավոր է գրավել մեր կողմը» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 10]։

1919 թ. հուլիսի 16-ին Թեքինսկին, Թիֆլիսում Ադրբեջանի զինվորական կցորդ գնդապետ Մահմեդ բեկ Ալիևին ուղարկած հուլիսի 19-ի հեռագրում տեղեկացնելով ՀՀ զորամասերի թվաքանակի, այդ թվում՝ Զանգեզուրում առկա ուժերի մասին, որը նա վերջնականապես չէր ճշտել, և իրազեկելով Կարսում, Դիլիջանում ու Սուրմալուի գավառում տեղաբաշխված ՀՀ զորամասերի, ինչպես նաև Վեդիբասարի, Շարուրի ու Նախիջևանի շրջաններում գտնվող հայկական 7-րդ գնդի 1-ին, 2-րդ ու 3-րդ զորամասերի, սահմանապահ բրիգադի, զինվորական շտաբի վաշտի, ականանետային զորամասի, երկու զրահագնացքների, հեծելազորի ու լեռնային ձիավոր մարտկոցի փոքրաթիվ զորամասերի, գնդապետ Կաֆիևի գլխավորությամբ Զանգեզուր ուղևորվող Ղարաբաղյան ջոկատի, Ալեքսանդրապոլում կանգնած հեծելազորի, տեղի ունեցած մարտական գործողությունների պատճառով հայկական զորամասերի տեղակայման վայրերի փոփոխության և այլնի մասին, հայտնում էր, որ գնդերի հրամանատարներին ուղղված գեներալ Շելկովնիկյանի գաղտնի հրամանների պատճենները ուղարկված են Շարուր-Նախիջևանի մահմեդականներին՝ ի գիտություն ասելով, թե այդ մասին հայկական իշխանությունները հավանաբար չգիտեն» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 6]:

Ներքին խլրտումներ կազմակերպելուց բացի՝ Խան Թեքինսկին ջանք ու միջոցներ չէր խնայում տնտեսապես կազմալուծելու համար Հայաստանը, որպես միջոց ընտրելով իրենց ձեռքին կենտրոնացած նավթի, մազութի ու բենզինի պաշարները: Թեքինսկին արտգործնախարարին ուղղված 1919 թ. հունիսի 4-ի հեռագրում պնդում էր, որ որևիցե պատճառ բռնելով՝ հետաձգվի Հայաստանի երկաթուղիների համար մազութ ուղարկելը, «որովհետեւ Նախիջևանի շրջանում դէպքեր էին սպասւում» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 26]: Ադրբեջանցի դիվանագետ լրտեսը խորապես համոզված էր, որ ֆինանսական դժվարություններ հարուցելով Հայաստանի առաջ՝ իրենց կհաջողվի նաև խլրտումներ առաջ բերել Հայաստանի ներսում: Միաժամանակ Թեքինսկին կարծում էր, որ իր կառավարությունը պետք է որոշ նախազգուշական միջոցներ ձեռնարկի՝ հաղորդակցության ուղիներում իր շահերն ապահովելու համար, խնդրելով նաև գործադրել միջոցներ, որ անգլիացիները չխոչընդոտեն ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ:

Ըստ Ա. Խատիսյանի վկայության՝ Խան Թեքինսկին, օգտագործելով դիվանագիտական քողածածկույթը, իր աշխատակիցների միջոցով Զանգիբասարի ապստամբած շրջան է ուղարկել 200 հազար ռուբլի, որոնք, սակայն, ճանապարհը շփոթելով, ընկնել են հայկական կառավարական պահակախմբի ձեռքը և հարցաքննության ժամանակ խոստովանել, որ այդ գումարը իրենք տարել՝ ապստամբած իրենց հայրենակիցներին հանձնելու համար: Հարցաքննության ժամանակ բռնված ադրբեջանցիները հաստատել են նաև Ադրբեջանի հատուկ սուրհանդակի միջոցով Շարուրի ապստամբ մահմեդականներին տրված 5 միլիոն ռուբլու փաստը [Խատիսեան, 1968, 205]:

Թեքինսկու հեռագրերից շատերը կարևոր տեղեկություններ էին պարունակում Բոյուք-Վեդու խռովարար մահմեդականությանը ցուցաբերած զինման, ֆինանսական օգնության մասին:

1919 թ. հուլիսի 14-ի հեռագրում Թեքինսկին, իր կառավարությանը իրազեկելով Բոյուք-Վեդիի ապստամբների դեմ ՀՀ կառավարության նախապատրաստությունների մասին, վստահեցնում էր, որ Հայաստանի մուսուլմաններին կարող է ազատել միայն Ադրբեջանի զինված միջամտությունը՝ նաև նշելով, որի ինքն իրեն օգնության խնդրանքով դիմաց մահմեդականներին պատասխանել է, որ առայժմ «Ադրբեջանը չի կարող օգնել զորքով, բայց մահմեդականների բոլոր ծախսերն ու վնասները անմիջապես կվերադարձնի» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 32]՝ կառավարությունից

պահանջելով առանց մի օր կորցնելու գումարներ ուղարկել Շարուր-Նախիջևան-Օրդուբադ ու Կարս այնտեղ սպասվող իրադարձությունների համար: Ի պատասխան այս պնդման՝ Ադրբեջանի արտգործնախարար Ջաֆարովը հանձնարարել է հնարավորության դեպքում պաշտոնատար անձ ուղարկել Բոյուք-Վեդի կամ նշանակել գաղտնի գործակալ՝ տեղի զինվորական մահմեդական կազմակերպությունների հետ կապի համար [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 33-34]: Բոյուք-Վեդիի հարցի հանգուցալուծումը նա տեսնում էր Հայաստանին անհապաղ պատերազմ հայտարարելու մեջ՝ ասելով, թե միայն այդպես կարող են «հանգստացնել կատաղած հայերին ու փրկել բազմաթիվ մահմեդականների կյանքն» ու գույքը՝ Երևանի գրավումը միշտ պահելով օրակարգում [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 39]: Այդ տեսակետն էր պաշտպանվում Խան Թեքինսկու 1919 թ. հուլիսի 28-ի հեռագրում՝ ուղղված նախարարապետին. «Կարծում եմ, որ մեր կառավարութիւնը պէտք է վճռական առաջարկ անէ անգլիացիներին՝ մեզ յանձնելու Ջուլֆա–Շահթախթի երկաթուղին՝ Ալեաթ–Ջուլֆա գծով՝ Պարսկաստանի հետ առևտուր սկսելու համար: Յանձնման ենթակայ այդ գիծը պէտք է երկարի մինչև Դաւալու գիւղը: Անգլիացիներին այդ առաջարկն անելու հետ միաժամանակ մատնանշեցէք Հայաստանի անընդունակութիւնը, գնացքների երթևեկութեան յաճախակի ընդհատումը. ընդ սմին, խոստացեք Շարուր Նախիջևանում նոր կարգ հաստատել: Կարծում եմ՝ անգլիացիք կհամաձայնեն» [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 38-39]:

Խան Թեքինսկին մշտապես գաղտնի հարաբերությունների մեջ էր Շարուր-Նախիջևանի շրջանի թաթարների հետ՝ նրանց դրդելով ապստամբության, մատակարարելով փող և այլն, որի պայմաններում ոչ մեծաթիվ հայկական պահակազորի դրությունը լավ զինված և բավականաչափ կազմակերպված մահմեդական բնակչության միջավայրում դարձավ վտանգավոր: Հայկական բանակի գնդապետ, հետախուզական ծառայության ղեկավար Ա. Շնեուրի կողմից կազմված 1919 թ. ռազմական ակնարկի համաձայն՝ թուրք-քրդաթաթարական հարձակումները Սուրմալուի շրջանի ու Կարսի մարզի վրա վերսկսվել էին, մահմեդականների կողմից նախապատրաստվում էր ընդհանուր հարձակում ողջ հարավային տարածքում ու Հայաստանի արևմուտքում [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 4]:

ՀՀ կառավարությունը, նրա հետախուզական ծառայությունը երկար ժամանակ հետևում էին Խան Թեքինսկու ծավալած գործունեությանը, նրա դեմ ոչինչ չէին ձեռնարկում, մինչև որ չստացան Կովկասում դաշնակիցների հրամանատարության ներկայացուցիչների աջակցությունը, որին Հայաստանից վտարման ու *persona non grata* [Ганбарова, 2021, 71] ճանաչելուն իր միջամտությունն է ունենում բրիտանական հրամանատարությունը, որի հրամանով էլ նա վտարվում էր Երևանից [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 236; «Աշխատավոր», 1919, օգոստոսի 26, Թիֆլիս]:

Պատմաբան Է. Զոհրաբյանի եզրահանգմամբ, առանց դաշնակից տերությունների ներկայացուցիչների համաձայնության, հնարավոր չէր լուծել Թեքինսկու վտարման հարցը [Զոհրաբյան, 2012, 181]: Թեքինսկու վտարման մասին անմիջապես ԱԳ նախարարը տեղեկացրել է Ադրբեջանում ՀՀ դեսպան Տ. Բեկզադյանին: «Անգլիացիների հրամանի համաձայն՝ Թեքինսկին ընդմիշտ մեկնեց Երևանից» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 236]: Թեքինսկուն հայկական իշխանությունները երկար ժամանակ հանդուրժեցին, ինչը պայմանավորված էր նրա քայլերին

տեղյակ լինելու, կոդավորված հեռագրերի գաղտնազերծման ու քաղաքական հանգամանքներով, անգլիացիների դիրքորոշման երկիմաստությամբ: Այդ ընթացքում Թեքինսկին ինքը գուշակեց իր հայրենակից պաշտոնատար անձանց կողմից անփութության հետևանքով իր հեռագրային կոդի գաղտնազերծման գաղտնիքը, պահանջեց այն փոխել [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 319; գ. 299, մաս 2-րդ, թ. 105], բայց դա չփրկեց վերջնաձախողումից: Եվ, ի վերջո, Ա. Խատիսյանը Ադրբեջանի կառավարությանը ուղարկած նոտայում անդրադարձավ Թեքինսկու գործունեությանը ու նրան *persona non grata* հայտարարելու հանգամանքներին, որ Թեքինսկու գործունեությունը ոչ միայն չի նպաստել Հայաստանի ու Ադրբեջանի միջև բարեկամական կապերի ամրապնդմանը, այլ, ընդհակառակը, «հեշտությամբ քայքայել այս ծանր օրերում և այն բարիդրացիական հարաբերությունները, որոնք գոյություն ունեն երկու հանրապետությունների միջև, և որոնց ամրապնդումը միշտ եղել է և մնում է Հայաստանի կառավարության ամենաջերմ ցանկությունը» [Զոհրաբյան, 2012, 181]:

Թեքինսկու հեռացումը Երևանից արտաքին աշխարհին պատճառաբանվեց իբր թե դեսպանի հիվանդությամբ, որի հետ կապված՝ մահմեդականները անհանգստություն արտահայտեցին, իսկ Խան Թեքինսկուն ուղարկված հեռագրում Միրբաբանը դեռ հույս էր հայտնում, որ Թեքինսկին ետ կվերադառնա Երևան, չնայած նաև ավելացնում, թե իբր լուրեր են տարածվել հայկական կառավարության պահանջով նրա ձերբակալության մասին [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 2, թ. 159, 169]: Խայտառակ ձևով ավարտելով իր պաշտոնավարումը Երևանում՝ Թեքինսկին, ի հատուցումն Ադրբեջանին «մատուցած ծառայությունների», 1919 թ. հոկտեմբերի 1-ին նշանակվեց Ադրբեջանի ԱԳ նախարարի օգնական [Ганбарова, 2021, 71]:

Այս ամենի հետևանքով 1920 թ. մայիսի կեսերին (մայիսի 19 -22) ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվական բաժինը ՀՅԴ բյուրոյին, ՀՀ արդարադատության, ներքին գործերի և զինվորական նախարարություններին, բանակի սպարապետ գեներալ Նազարբեկյանին, պառլամենտի նախագահին, ինչպես նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին, Բաթումիի ընդհանուր հյուպատոսին, Հայաստանի պատվիրակությանը Փարիզում, Հայաստանի Հանրապետության դեսպաններին Իտալիայում, Լոնդոնում, Վաշինգտոնում և այլուր, հղեց մի հեռագիր-հաղորդագրություն՝ հայտնելով, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից հրատարակվել է Ադրբեջանի Հանրապետության՝ Երևանում գտնվող դիվանագիտական ներկայացուցչության ներկայացուցիչների ու նրանց գործակալների միջև փոխանակված գաղտնի ողջ գրագրությունը: Հեռագրում ասվում էր, որ այն վերաբերում է Ադրբեջանի կառավարության ու նրա ներկայացուցչի՝ Հայաստանում ունեցած հակապետական, հակահայկական ագրեսիվ գործունեությանը, որը նպատակաուղղված է եղել Հայաստանի շրջաններում հակապետական հոսանքների ու ելույթների կազմակերպմանը, նաև նրան, որ ամեն կերպ խարխլվեն պետականության հիմքերը հայկական հանրապետությունում, իսկ վերջին հաշվով և գործնականում՝ Զանգիբասարում ապստամբական դրության խորացմանը, ՀՀ իշխանությունների հեղինակության խարխլմանը, դրանց տապալմանն ու ՀՀ տարածքի օրինական ու անբաժանելի մասը կազմող Զանգիբասարի շրջանի բռնակցմանը Ադրբեջանին [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 284, 288, 290; գ. 461, թ. 24-27, 28-31, 40]: Բացի դրանից՝ Արտաքին գործերի նախարարությունը, դիմելով «Յառաջ» [«Յառաջ», 5 հունիսի 1920, № 116, 6 հունիսի 1920, № 117, 8 հունիսի 1920, № 118, 14 հունիսի 1920, № 121], ինչպես նաև «Ժողովուրդ», «Ռազմիկ», «Սոցիալիստ-հեղափոխական» (միայն վերջին պա-

հին «Սոցիալիստ-հեղափոխական» թերթի կառավարության հրահանգով փակվելու պատճառով այդ կարևոր նյութը չհրապարակվեց, թեկուզև նախատեսվել էր) ու այլ թերթերի, վերջիններիս առաջարկեց տպագրել Ադրբեջանի գործակալների գաղտնի հակապետական գործունեության մասին հայտնի գրագրությունը՝ հենվելով այդ գործի ամբողջական տարբերակի վրա, այն տպագրելով նաև անգլերեն:

Թեքինսկու անփառունակ գործունեության շարունակողը դարձավ նույնպիսի համբավի արժանացած բանաստեղծ ու հասարակական գործիչ Աբդուռահման բեկ Հախվերդովը, որը 1919 թ. օգոստոսի 24-ին նշանակվեց դիվանագիտական ներկայացուցիչ Հայաստանում [Ганбарова, 2021, 71]:

1919 թ. օգոստոսի վերջերին Ադրբեջանը ՀՀ կառավարության առաջ հարց բարձրացրեց՝ Աբդուռահման Հախվերդովին Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու մասին: Վերջինս պետք է հաջորդեր Խան Թեքինսկուն, որի մասին հետաքրքիր դիտարկում կա Հախվերդովի դպրոցական դասընկեր, Բաքվում ՀՀ դեսպան Տ. Բեկզադյանի օգոստոսի 24-ի օրագրային գրառման մեջ, որում Բեկզադյանը հույս էր հայտնում, որ Հախվերդովն իր նախորդի նման չի զբաղվի զանազան խարդավանքներով, որ նրա նշանակման դեմ ինքը ոչինչ չունի, որ համամիտ է այդ նշանակմանը մինչև ՀՀ կառավարության պաշտոնական համաձայնությունը ստանալը [Տիգրան Բեկզադյան, 2025, 154, 157-158]: Սակայն Հախվերդովը դարձավ Թեքինսկու «գործի արժանի շարունակողը»՝ դրամական խոշոր «օգնություն» հասցնելով Շարուր-Նախիջևանին ու Զանգիբասարին, որի շնորհիվ էլ շարունակական բնույթ ստացան այդ շրջանների ապստամբությունները: Բավական է նշել այն մասին, որ 1919 թ. հունիս-հուլիսին Նախիջևանի նահանգապետին է ուղարկվել մոտ 5 միլիոն դրամ՝ բոներով ու չեկերով, որոնք Լոռու «Չեզոք» զոնայով անցման ժամանակ կողոպտվում էին գնացքի վրա հարձակված «ավազակների» կողմից, որոնք Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Աբդուռահման բեկ Հախվերդովից [Ղուլյան, 2006, էջ 142–148] խլում են ողջ դրամական գումարը [Գաղտնի փաստաթղթերը, 1920, 9]: Այդ մասին փաստում են նաև Կ. Սասունին, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Խատիսյանը [Սասունի, 1968, 173; Ռուբէն, 1982, 246; Խատիսեան, 1968, 205]՝ հավաստելով, որ դրանք նախատեսված էին Հայաստանի իշխանությունների դեմ Զանգիբասարում, Շարուրում և այլուր՝ խռովարարական-անջատողական տրամադրությունները ուժեղացնելու համար՝ հայտնի տարածքները Հայաստանի Հանրապետությունից անդամահատելու ու Ադրբեջանին կցելու նպատակադրմամբ: «Մի օր, հեռագիր ստացուեց. Ազրբէյջանի նոր դեսպան Հախվերդովը եւ ժողովրդական կուսակցութեան պարագլուխ Ս. Յարութիւնեանը, նոյն գնացքով, Թիֆլիսից մեկնում էին Երեւան: Ռուբէնի հետ անմիջապէս համապատասխան կարգադրութիւններ արինք եւ մարտի 8-ի լուսաբացին, Լոռիի չէզոք գոտիում, Սանահին-Քոբեր կայարանների միջեւ, մի խումբ դիմակաւոր ու զինուած երիտասարդներ կանգնեցրին գնացքը եւ Հախվերդովից ու Յարութիւնեանից խլեցին նրանց գոյքը: Հախվերտովի մօտից առել էին 3.400.000 ռուբլի ազրբէջանեան եւ 2 միլիոն ռուբլի անդրկովկասեան բոներ, իսկ Յարութիւնեանից՝ 296.000 անդրկովկասեան բոներ, որ նա տանում էր իրենց կուսակցութեան Երեւանի «Ժողովուրդ» թերթին: Այս դէպքը ահագին իրարանցում առաջ բերեց:

Ազրբէջանեան կառավարութեան կողմից բողոքներ տեղացին Երեւան: Վրացիք ծիծաղում էին ազրբէջանցի իրենց բարեկամների վրայ: Հայաստանի կառավարութիւնը ցաւակցութիւն յայտնեց Ս. Յարութիւնեանին: Վերադարձրեց նրանից խլուած դրամը եւ ոսկէ ժամացոյցը, թէեւ Յարութիւնեանի բերած դրամը «Ժողովուրդ» թերթին՝ պիտի ծախսուէր պայքարելու համար կառավարութեան դէմ» [Վրացեան, 1966, 103]: Այդ մասին է գրում նաև Տ. Բեկզադյանը 1919 թ. հուլիսի 25-ին իր օրագրային գրառման մեջ՝ ասելով, որ ինքը ստացել է Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության հանձնարարությունների սպայի զեկուցման պատճենը, որով տեղեկացվում է, որ Խան Մակինսկու կառքը, որում եղել է Ադրբեջանի արտգործմինիստրի նամակը, ենթարկվել է հարձակման՝ ավելացնելով, որ իրենից խնդրում են իրականացնել հետաքննություն ու վերադարձնել Խան Մաքինսկու բռնազավթված իրերը, որ ինքը տեղեկացրել է Ադրբեջանի արտգործմինիստրին, որ զեկույց է ուղարկել Հայաստան՝ խնդրելով, որ իրականացվի ամենախիստ հետաքննություն և արդյունքների մասին տեղեկացվի՝ համապատասխան մարմիններին տեղյակ պահելու համար [Տիգրան Բեկզադյան, 2025, 144]:

Այդ մասին հետաքրքիր դիտարկում կա «Նեմեսիսի» ակունքներում կանգնած հայ վրիժառու Միսաք Թոռլաքյանի մոտ, որը եղել է ՀՅԴ ակտիվ անդամներից, 1915-1918 թթ. ծառայել է ռուսական բանակի հետախուզությունում, այնուհետև՝ Դրոյի հրամանով Բաշ-Ապարանի ճակատամարտում ակտիվորեն մասնակցել թուրքական զորքերի դիրքերի վրա հարձակմանը. «…Հայաստանի մէջ ՀՅԴ Բիւրօն կը յանձնարարէ Վրաստանի Կեդր. Կոմիտէին, թալանել չէզոք գօտիի մէջ. Ատրպեճանին դեսպան Հախվերտովի շոգեկառքը եւ ձեռք բերել պէտք եղած փաստաթուղթերը: 1920 թուի մարտի վերջերը, երբ Հախվերտովը Պաքու տուած իր հերթական այցելութենէն կը վերադառնար, չէզոք գօտիի մէջ, գիշեր ժամանակ, խումբ մը զինուած երիտասարդներ, վրացական հագուստ հագած, կը յարձակին շոգեկառքին վրայ: Տղայքը կը խուժեն Հախվերտովի վակոնը, կը թալանեն մէջը գտնուողներուն ունեցած-չունեցածը: Եւ որպեսզի ձեռնարկին զուտ աւազակային բնոյթ տան, չեն խնայեր նոյնիսկ հայ հասարակական գործիչ Սամսոն Յարութիւնեանին, որ կը գտնուէր վակոնին մէջ եւ կ'երթար Երեւան: Ձեռք բերած փաստաթուղթերը որեւէ կասկած չէին թողուր Հայաստանը ներսէն պայթեցնելու Ատրպեճանի եւ Տաճկաստանի նպատակներու մասին: Այդ փաստաթուղթերէն մաս մը տպուեցան Ռուբէնի յուշերու եօթներորդ հատորին մէջ» [Թորլաքեան, 2001, 455-456]: Այդ դեպքերի ազդեցության տակ Ա. Հախվերդովը հրաժարվում է աշխատել Հայաստանում, որի մասին նա նամակով դիմում է արտգործնախարարին [Ганбарова, 2021, 72]:

Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության քարտուղար ու փոխարինող Միր Բաբանի 1919 թ. սեպտեմբերի 18-ի (№ 736) և սեպտեմբերի 21-ի (№ 757) հեռագրերում՝ ուղարկված Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին, ևս պարունակվում են հետաքրքիր մանրամասներ Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքում խռովարարական-հակապետական շարժումներին ցույց տրված ֆինանսական-դրամական աջակցության, ինչպես նաև քայքայիչ լրտեսական-հետախուզիչ գործունեության մասին: Այսպես, Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի կողմից արտգործնախարարին ուղարկված 1919 թ. սեպտեմբերի 18-ի հեռագրից տեղեկանում ենք, որ Բաքվի հայկական գործակալը հաղորդել է Հայկական հակահետախուզության պետին, որ ներկայացուցչությանը կից հատուկ հանձնարարությունների գծով սպա կապիտան Քասումբեկովը (հետաքրքիր է նշել, որ նոյեմբերի 5-ին հայ մաուզերիստների

կողմից կողոպտված Ադրբեջանի ներկայացուցչությանը կից հատուկ հանձնարարությունների գծով սպա Քասումբեկովի բնակարանից տարվել էր մոտ կես միլիոն ռուբլի, ինչի մասին 1919 թ. նոյեմբերի 21-ին (№ 1455) Հախվերդովը տեղեկացրել է Ադրբեջանի վարչապետին՝ միաժամանակ ավելացնելով, որ կատարվածի դեմ ՀՀ կառավարությունը անուժ է, ոչինչ չի կարող ձեռնարկել, և կոռնետ Ալի խան Մակինսկին հաշվառման մեջ են գտնվում Ադրբեջանի հակահետախուզությունում: Միր Բաբաևը, հաղորդելով, որ հայկական հատուկ ծառայությունները բացահայտել են իրենց գործունեությունը Երևանում, խնդրում էր արտգործնախարարից, որպեսզի Քասումբեկովին ու Մակինսկուն տրվի զինվորական համազգեստ, և նրանք մտցվեն Ադրբեջանի բանակի կազմի մեջ և դրանով իսկ նրանց կարողանան ազատել զանազան պատահականություններից՝ դնելով ներկայացուցչության հովանու տակ, դրանով իսկ ազատվելով նաև հայկական հակահետախուզությունից [ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 155]:

1920 թ. մարտի 20-ին Թեյմուր բեկ Մակինսկին, նշանակվելով հայկական կառավարությանն առընթեր Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ, շարունակում էր իր նախորդների լրտեսական գործունեությունը, որի մասին փաստել է նույնիսկ ադրբեջանցի հեղինակ Ս. Գանբարովան՝ նշելով այն մասին, որ Հայաստանի ներքին գործերի նախարարությունը Թ. Մակինսկու գլխավորած դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների նկատմամբ հարուցել է քրեական գործ [Ганбарова, 2021, 72]: Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության վերջին դիվանագիտական ներկայացուցիչը Հայաստանում, ինչպես նշում է Ի. Նիֆթալիևը, եղավ Թեյմուր Խան Մակինսկին, որը 1920 թ. մարտի 16-ին վերանշանակվեց այդ պաշտոնում: Նույն թվականի մայիսին՝ Ադրբեջանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո, դիվանագիտական առաքելությունը դադարեցրեց իր գործունեությունը, և Թիֆլիսում գտնվելու ընթացքում Թ. Մակինսկին պատրաստեց առաքելության գործունեության ու դրա աշխատանքի կասեցման պատճառների վերաբերյալ ընդարձակ զեկույց: Զեկույցն ուղարկվեց Ադրբեջանական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մ. Դ. Հուսեյնովին: Նշելով առաքելության աշխատանքի դժվարին պայմանները՝ Թ. Մակինսկին նշել է, որ իր գործունեությունը նպատակաուղղված է եղել մուսուլմանների անձնական ու գույքային անվտանգության ապահովմանը՝ ընդգծելով նաև, որ դիվանագիտական ներկայացուցչի ու առաքելության մնացած աշխատակիցների դիրքը բավականին անկայուն է եղել: Մակինսկին կեղծելով իրողությունը՝ կարծիք էր հայտնել այդ փաստաթղթում, թե հայկական իշխանությունները ընդհանրապես հաշվի չէին առնում արտերկրայնության (էքստրատերիտորիալության) սկզբունքը, հաճախակի են գրանցվել իրենց առաքելության աշխատակիցների ծեծի ու ձերբակալությունների դեպքեր, և այս հարցի վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված բողոքները մշտապես մնացել են անպատասխան: Թ. Մակինսկին այդ զեկույցում ստահոդ պնդել էր, որ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի կառավարության վերաբերմունքը առաքելության ու անձամբ իր նկատմամբ էլ ավելի է վատթարացել, և իբր թե ձերբակալության հավանականությունը նրան ստիպել է լքել Երևանը, և իբրև թե իր մեկնելուց կարճ ժամանակ անց՝ 1920 թվականի մայիսի 15-ին, դիվանագիտական առաքելությունը հեռագիր է ստացել Հ. Օհանջանյանից, որ

Ադրբեջանում նոր կառավարության հաստատման կապակցությամբ առաքելությունը լուծարվում է, որին հաջորդել է դիվանագիտական առաքելության բոլոր հարաբերությունների խզումը Հայաստանի կառավարության հետ [Нифталиев, 2024, 35-36]:

Երևանը՝ որպես իրենց կենտրոնատեղի ընտրած Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչների հակահայկական սադրիչ ու քայքայիչ գործունեությունը, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում լրտեսական-հետախուզական ցանցի ու գործակալական խմբերի ստեղծումը ոգևորում էին մահմեդական զանգվածին, որոնց առաջնորդները նրանց դրդում էին զանազան մեքենայությունների, նպատակամղում ապստամբական գործողությունների ՀՀ օրինական իշխանությունների ու հայ ժողովրդի դեմ: Եվ այդ հանգամանքից ոգևորվելով՝ Զանգիբասարում, Զոդ-Բասարգեչարում, Կարսի մարզում և այլուր հակապետական խռովության դրոշ բարձրացրած մահմեդական հրոսակախմբերը՝ թուրք սպաների, հատուկ ծառայությունների գործակալների գլխավորությամբ ու զինվորականների, ասկյարների մասնակցությամբ, հայկական զորքերին ու տեղական իշխանություններին համառ դիմադրություն էին ցույց տալիս՝ ձգտելով խարխլել հայկական պետության հիմքերն ու անդամահատել ՀՀ տարածքը՝ խախտելով նրա ամբողջականությունը:

References

Hayastani Azgayin Arxiv-HAA

Blishhenko V., Saryev R. 2015. Dipsluzhba nezavisimogo Azerbajdzhana (1918-1920 gg.). «Obozrevatel'-Observer», no 2, s. 105-113.

Gaxtni p'astatxter 1920. Adrbejani davadrakan gorc'unetyan mi e'j. Erevan, Glxavor shtabi tparan («Razmiki» tparan, N 1), 56 e'j.

Ganbarova S. 2021. Diplomaticheskoe predstavitel'stvo Azerbajdzhanskoj Demokraticheskoj Respubliki v Armenii v 1918-1920-e gody. «Грані. Історія». Том 24, N 4, s. 66-74.

Ghulyan Yu. 2001. Divanagitakan haraberutyunneri hastatumy' Hayastani ev Adrbejani Hanrapetutyunneri mijev. «Banber Erevani Hamalsarani» no 2, e'j 124-129.

Ghulyan Yu. 2006. Adrbejani divanagitakan nerkayacucich H'an-Tekinsku hakahaykakan gorcuneutyuny' Hayastani Hanrapetutyunum (1919 t. mart-ogostos), «Banber Erevani hamalsarani», N 2 (119), Erevan, e'j 137-145.

Ghulyan Yu. 2007. Adrbejani nerkayacucich Abdurahman bek Haxverdovi gorcuneutyuny' Hayastani Hanrapetutyunum (1919 t. ogostos-1920 t. mart). Mijbuhakan gitajhoghovi nyuter.2006 t. Banber 1. Gitakan ashatutyunner-1. Prak A.Vanad'or, Arminfo, 2007.

Ghulyan Yu. 2009. Hayastan-Adrbejan haraberut'yunneri patmut'yunic.1918-1920 t'vakanner, Erevan, «Egea» hrat., 452 e'j

Hayastani Hanrapetutyuny' 1918-1920 tt. 2000. Qaghaqakan patmutyun. Pastatxteri ev nyuteri jhogovacu, xmb. G. Galoyani, Erevan, HH GAA «Gitutyn» Publ., 455 e'j

Harutyunyan K. 2002. Haykakan azgayin zoramiavorumnery' 1918-1945 tt., Erevan, «Zangak-97» Publ., 272 ej

Hovhannisyan R. 2005.Hayastani Hanrapetutyun: Hator I. Arajin Tari. 1918 -1919. Erevan, «Tigran Mec» Publ., 570 e'j

Jamalova N. 2025.Political Relations Between Azerbaijan And Armenia: M.Kh.Tekinsky's Activity. Gournal of General Tuskish History Research. GTTAD, Cilt: 7, Sayı: 15, Eylül. P.887-901.

Khatisean Al.1968. Hyastani Hanrapetutean cagumn u zargacumy', Beyrut, «Hamazgayin» Hay Mshakutayin y'nkerakcutyun, Tp. Hamazgayin, 486 e'j

Knyazyan D. 2008. Adrbejanakan Demokratakan Hanrapetut'yan kovkasyan qaghaqakanut'yuny' 1918-1920 t't'., Erevan, Hegh. Hrat., 2008, 200 e'j.

Naxijevan-Sharury' 1918-1921 tt. 1993. P'astatxter ev nyuter. V. Ghazaxecyan xmbagr., kazmoghner A. Virabyan, R. Grigoryan, A. Kirimyan ev urishner, «Banber Hayastani Arxivneri», N 1-2, ej 22-391.

Niftaliev I. 2024. Iz Istorii diplomaticheskoj missii Azerbajdzhana v Armenii (1918-1920 gg.). Istoriya. N 129, s. 34-37.

Mammadyarov E. 2019. 100 years of the Republic of Azerbaijan's diplomacy: upholding national interests at the crossroads of epochs and regions// 00 years of diplomatic service of the Republic of Azerbaijan, 2019. 2-3 (39-40), pp. 4-123:

Ruben 1991. Hay heghapoxakani my' yishataknery'. Artasahman.Sasun ev Hayastani Hanrapetutyun. Hator 7. Tehran-Erevan, Adana Publ., 364 e'j

Ruben 1982. Hay heghapoxakani my' yishataknery'. Artasahman.Sasun ev Hayastani Hanrapetutyun. Hator 7. Tehran, 364 ej

Sasuni K. 1968. Mayisyan xrovutyunnery' ev tatarakan apstamb shrjannery': /Hayastany' 1920-in/. Beyrut, tp. «Mshak», 208 e'j

Terteryan 1957- Terteryan I. Haykakan goyamarty'. Hator 6. Tehran, tp. Modern, 642 e'j

Tigran Bekzadyan 2025. Adrbejanum Hayastani Hanrapetutyan divanagitakan nerkayacicich Tigran Bekzadyani oragiry' (11 marti 1919 t. -27 ogostosi 1919 t.). Ashatasirutyamb՝ Vl. Harutyunyani, Erevan, Hegh. Publ., 288 e'j

Torlaqyan M. 2001. Orerus het. G hrat., Pe'yrut, tp. Vahe Setean, 623 ej

Vracyan S. 1966. Keanqi ughinerov. De'pqer. De'mqer. Aprumner. Hator E, Pe'rut, tparan «Hamazgayin», 357 e'j

Vracyan S. 1993.Hayastani Hanrapetutyun. Erevan, "Hayastan" Publ., 704 e'j

Virabyan V. 2021. Revealing The Khan Tekinsky Conspiracy (from the history of counter intelligence of the First Republic of Armenia), «Fundamental Amenology» (Electronical Journal). № 1 (13), PP. 51-81.

Virabyan V. 2023, The Conflict of European and Russian Special Services In The Transcaucasus 1918-1920, Europe and its Eastern Countries and in particular Armenia, ed. Artak Mkrtichyan, Samvel Poghosyan, "Cuadernos De Derecho Europeo", N 9, "Iuee "Salvador De Madaiaga", La Coruna, 2023, pp. 135-157.

Zohrabyan Ed. 2012. Naxijevanyan himnaharcy' ev Hayastani «Dashnakicnery'» (1918 t. dekt.-1920 t. april), Erevan, Tigran Mec Publ., 265 e'j